

Ս. ԵԶՄԻԱԾԻՆԸ ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԻ ԵՐԳԵՐՈՒՄ:

Հայ ժողովրդի մէջ ուխտագնացութեան ամենաջերմ պաշտպաններն ու խրախուսողները եղել են աշուղները: Նրանց երգերի մէջ Եջմիածինը յիշուած է միշտ մեծ պատկառանքով և ջերմեռանդ երկիւղածութեամբ: Այստեղ առաջ կրեցինք մի քանի զուտ աշուղական երգեր, դաղափար տալու համար, թէ ժողովրդի այդ հարազատ զաւակները ի՞նչ են զգացել ու ի՞նչ երգել ս. Եջմիածնի մասին:

Անցեալ ժամանակներում ճանապարհներին դժուար հաղորդակցութիւնը, ընտանեկան անձուկ հանգամանքները արգելք էին լինում աշուղին ս. Եջմիածին ուխտ գնալու, և ահա ինչպիսի ջերմ կարօտով է արտայայտուած նա իւր այդ փափագը.

Դիշեր ցերեկ քու խասրատը կու քաշեմ,
Նասիր ըլնի տեսնամ սուրբ Եջմիածին.
Քու խասրաթէն կուլամ, արտսունք կը թափեմ,
Նասիր ըլնի տեսնամ սուրբ Եջմիածին:

Միակէն Բուրջին, որ տեսել էր Եջմիածինը՝ ուխտ արել, համբուրել էր նրա սրբութիւնները, յայտնում է իւր հիացմունքը, իւր ստացած հոգեկան ու բարոյական մեծ մխիթարութիւնը ամէնքին յայտնի երգով.

Եջմիածին խիստ սիրուն պայծառ տեսի,
Երկու հարիւր կանթեղ յիսուն ջառ տեսի,
Դիփ ամենը ջերկա-ջերկա վառ տեսի,
Վաթսուն աւել հենց ոսկի բուրվառ տեսի,
Լուսաւորչու տաճարը մարմառ տեսի, ևլն:

Ըստ երեւոյթին այստեղ աշուղը ռեզոնանսային մէջ չափազանցնում է, քայց ո՛չ, նա իսկ որ տեսել է Եջմիածինը այդպէս բարգաւաճ, լիառատ ու ճոխ դրութեան մէջ: Մինչև այժմ էլ ժողովուրդը երանութեամբ է յիշում Նիւրեմ կաթողիկոսի օրերը: Ահա և աշուղ Ղաղարի գովքը այդ ժամանակի Եջմիածնի վերայ.

Էջմիածին խիստ գովական զանեղան,
 Ծառայ ընիմ սուրփ աթոռիդ սուրփազան,
 Մէ հէնց պայծառ կու փայլի, նման է արեգական,
 Զորս կողմն լաջիվարդած կու երևայ զարմանազան,
 Աջիդ ունիս լալ ու եաղուիթ, ալմաս թրաշ սուրբ
 գաւազան:

Դիշերուանց քաղցր ձայն կուտայ, կու բացուի դրախ-
 տի դուռն,

Միջին բազմեցրած է Լուսաւորչի աջ կուռն,
 Օսկի զալամով քաշած է Դիւստանու վարդն ու սմբուլն,
 Վրեն շուռ կուգայ ճիւճխալով քաղցրաձայնիկ բլբուլն,
 Օսկի մարմառ սուրբ սեղանն խիստ գեղեցիկ, սուր-
 փազան:

Կոյս մայրն մեր Աստուածածին—չի կայ նման իրան
 հասն,

Բարձր զանգակատանը կախ տուած ունի սհաթն,
 Աջակողմն Գեայրանէն ա, ձախակողմն Շողակաթն,
 Սուրբ հայրն մեր Լուսաւորչուն, զարդարել ա Տրդատն,
 Կոյս մայր մեր Հռիփսիմէն խիստ գեղեցիկ, զանեղան:

Զուխտ սարկաւագով շուրջ կուգան, սուրբ սեղա-
 նին դլուխ տալով,
 Միաբանքն զարդարուած են խաշ խաշվառով, շուր-
 շառով,

Ես անարժան Ղազարս մայիլ էլա մտիկ տալով,
 Ով որ որ ինձ կույիշի, արժանանայ դրախտին բարով,
 Եփրեմ սուրբ կաթողիկոսն խիստ գեղեցիկ, զանեղան:

Էջմիածինն ուրեմն այնպիսի լաւ տպաւորութիւն էր թող-
 նում աշուղներէ վերայ, որ իրենց բոլոր բանաստեղծական ոյժը
 գործ էին դնում գովելու նրան ու սէր զարթեցնելու ժողովրդի
 մէջ, որ ուրիշներն էլ գան, ուրիշներն էլ «մայիլ ըլնին» սուրբ
 հօրն մեր Լուսաւորչու հիմնած մենաստանի գեղեցիկ տեւքին:

Էջմիածին խիստ լաւ տեղի,

Միջումն կայ շատ արեղայ,

Ամէնքն կտան մէկ «հայր մեղայ»,
Սալուի չինար էջմիածին:

Սիրուն սիրուն դռներ ունիս,
Ոսկեջրած կռներ ունիս,
Արքայութեան հստեր ունիս,
Սալուի չինար էջմիածին:

Երեսդ արել ես Մասիս,
Ամեն նեղութիւնի հաս իս,
Երկուց խորան լուսոյ մաս իս,
Սալուի չինար էջմիածին . . .

Առողջ Քիչիկ Նովա մի գեղեցիկ մուսամմազի մէջ ներկան
նկարագրելով, հա ինչպիսի խորհրդածութիւններ է անում ս.
էջմիածնի անցեալի մասին:

Լուս պայծառ Իլման տիղն՝ դուռն շատ գովելի է,
Ծաղկած բոլորքըն գաշտով՝ խուրն շատ գովելի է,
Բարելի պտուղ տըւող ջուրն շատ գովելի է,
Մեծամեծ օտարն երգնէն հուրն շատ գովելի է,
Ցոյց տուէք այս ասմունքն, վուրն շատ գովելի է:

Տրդատի ժամանակին տես ինչքան բաշարեցին՝
Սրբանց նահատակելով չելաւ, չը բեղարեցին.
Սուրբ Գրիգոր Լուսաւորչուն սարսափեալ չարչարեցին,
Գցեցին խուր վիրապն, օձն ու կարիճ չարեցին . . .

Հոռուսիմ՝ կոյսն փախաւ Տրդատի պալատիցն,
Սուրբ Գայեանի ձեռնէն բռնէին՝ մասն մատիցն,
Անհամբարք բաղմութիւն հասան շատէն շատիցն,
Նահատակ կոտորուէին՝ չը զրրկուած հաւատիցն.
Հաւատի համար լաւ է, սուրն շատ գովելի է: . . .

Իլման տեղի աթուռն Տրդատի դարդարած է՝
Ուսքովն քարն կրած, շնուրքով պտան չարած է,
Անհամբարք կանթիղներն սուրբ տաճարին վառած է,

Սուրբ միռոնի էփ գալով այլ ազգն խաւարած է,
 Լուսաւորչու մասունքն—կուռն շատ գովելի է:

Հայոց այն թուէն դէսն շատ չար ու բարի անցաւ,
 Հազար ութ հարուր եառասուն ու մէ տարի անցաւ.
 Քանի՜ կաթուղիկոսներ դիմի էն ճանապարհին անցաւ...
 Նրանց հագի ըզգեստն—շուրն շատ գովելի է:

Տէր, խաւարած մի թողնի, լուսիդ արժանի արա,
 Մի հեռացնի էրեսդ, տեսիդ արժանի արա,
 Ողորմութիւնդ շատ է, կիսիդ արժանի արա,
 Երկնային հարսն շինէ, փեսիդ արժանի արա,
 Քիչիկ նովի ասմունքն—խուռն շատ գովելի է:

Ղալամ—օղլի աշուղը թափառական խեղճ աշուղ էր, եր-
 գում էր ռամկական գռեհիկ լեզուով, բայց իւր զգացմունքով չի
 ուղղում յետ մ'նալ միւսներէն—

Է՛յ աղալար, մէկ գըզըմ՝ չորս վանք տեսայ՝
 Մէկն Հոռոմսիմա, Շողակաթ խանա,
 Ասին ուռումելին խարսճ կու կիտին (?),—
 Մէկն Լուսաւորիչ մէկն Գիայրանա:

Հայն զուլլուղ կանէ յիսուն օր պասին,
 Լուսն ա կամար կապեր քու բեմի դասին,
 Գեւափատ վարագուր քաշած յերեսին.
 Հոգեւոր տէրն պիտի սուրաթն բանայ:

Առաւտուց անուշ կուգայ պաշտումի մառը,
 Հինգ հարուր լիւլա ա մէկ ոսկէ ճառը.
 Անկրակ մեռոն մատաղհաս գառը
 Կերթայ արեւ լուսահոգին Բաթանայ:

Պատերը անգին քար շարած, մարգարիտ,
 Շատ մարդ զուլլուղ կանէ քու մառմառ քարիդ,
 Չարն խափանեցիր, առաջն բարիդ.
 Խաչուառ ջաւահիր էր մահուդ անդանայ...

Խաչվառ ջաւահիր էր ինչ լալ ու մարջան,
Դռներն էր ոտկեծեծ ինչ ֆռանկի բան,
Փռւովառ կար անգին քար դրախտի նման,—
Ղալամ օղլին տեսաւ զալ խանա խանա:

Պատմական—նկարագրական տեղեկութիւններով աւելի
հարուստ է աչքդ Քեանհանի «Գովաստանութիւն առ սուրբ Էջ-
միածնի» դաստանը:

Էջմիածին—Սիօն մայր տաճարն մեր,
Միաբանեալ անդ է ուղղափառն մեր,
Արմատ պինդ հայրապետական ծառն մեր,
Հաւատ լուսաւորչական է վառն մեր:

Վաղարշապատ էր Տրդատի օրօքն,
Միշտ պահպանէր հսկայազօր զօրօքն,
Անդ Էջմիածին լուսափայլ շնորհօքն
Տեսլեամբ տեսեալ սուրբ Գրիգոր հայրն մեր:

Պինդ պահէր նա քրիստոնէական դաւանը,
Զեռնադրուեց, ձեռն առաւ դաւազանը,
Լուսաւորեաց աշխարհն մեծ Հայաստանը,
Նա յայնմանէ հալածեց խաւարն մեր:

Յորժամ հիմն արկին սուրբ Մայր Աթոռը,
Պատճառ եղաւ սուրբ Գրիգոր լուսաւորը,
Անպատմելի է բայց, պատմեմ ձեզ սրբ՝
Շնորհօք սուրբ Հոգւոյն գեղեցկաշարն մեր:

Անուանեցին Աթոռ Լուսաւորչական,
Անդ ժողովեաց սուրբն բազում միաբան,
Զարդարեցին եկեղեցիս զանազան,
Պայծառացաւ Հայաստան աշխարհն մեր:

Փութանակի հրաման ել վեհիցը,
Քննեցին այդ առաջ վերջը քէիցը,

Թարգմանեցին գիրք սուրբ մարգարէիցը.
Ոչ ոք կարէ լինել հակաճառն մեր:

Անդ է սուրբ կուսանաց վկայարանը՝
Հոռոմսիմէն, Շողակաթ, Կայարանը,
Նքա ընկալան պսակ անթառամը,
Եղեն լուսաւորութեան պատճառն մեր:

Տասնևերկու անուանի վիմաքար են,
Հսկայ Տրդատ երեք Մասիս սարէն.
Աղանակերպ լոյս կու փայլի տաճարէն.
Առ Քրիստոս է ուղիղ ճանապարհն մեր:

Երկնից իջեալ սրբազնաց սաղաւարտը,
Անօթ ընչից անպատմելի է զարդը,
Պարգեւատու արիւն թաթախ Գեղարդը
Միշտ կուպահէ անշարժ հիմնաքարն մեր:

Շինուածք Աթուոյն ամեն ոսկեղօծ են,
Նետիւ թերահաւատներուն կու խոցեն.
Եօթն ամաց մէկ անգամ մեռնն կու օծեն,
Նովաւ կու մաքրի մեղաց նշխարն մեր:

Սուրբ հաւատս սրբութեամբ հաստատեցէք,
Հորք իմաստունք, յիմարաց խրատեցէք,
Համաձայնեալ առ Քրիստոս պաղատեցէք,
Անխախտ մնայ Հայկաղեան տօմարն մեր:

Մեք հօտ կոչեալք՝ հովուապետ սրբազանը,
Որդիքն Հայկայ և ազգն Յաբեթեանը,
Նախնական սահման՝ սեղանատանը
Կ'ընթեռնուն Սարգիս Շնորհալու ճառն մեր:

Խնդրեա՛, Քեանհան, քու խնդիրդ Հղօրէն,
Պարգեւատու աէր Յիսուս թագաւորէն,

Բարեխօս լերուք, սիրելիք համօրէն,
Անցէ հանգիստ հեշտութեամբ դժուարն մեր:

Ս. Էջմիածնի վանքի դովաասնութեան հետ հայ աշուղները
գովել ու փառաւորել են և նրա վեհապետին, «Հոգևոր Տիրոջը»,
«սուրբազանին»: Ահա ինչ է երգում ու թողնամեայ աշուղ Քե-
շիշ—օղլին Նիրեմ կաթուղիկոսի համար.

Սեղանդ մասունք ա, վերարկուդ խաս ա,
Ծառայ եմ քու սուրբ աթոռիդ, սուրբազան.
Սկիհդ արիւն մարմին, միջինը մաս ա,
Ծառայ եմ քու սուրբ սեղանիդ, սուրբազան:

Աստուածախօս Մովսէս, սրբոց նահապետ,
Կարգդ հրեշտակաց դու ես Մելքիսեղ,
Նպիսկոպոսապետ ուղիդ հայրապետ,
Ծառայ եմ քու իւզամիառիդ, սուրբազան:

Դաւազանդ ոսկի ա, փիլոնդ խարա,
Ազօթքդ եար եղաւ, ես շնորհքս առայ,
Զարհուր Քեշիշ օղլին լինի քեզ ծառայ.
Ծառայ եմ քու խալ խալփասիդ, սուրբազան:

Իսկ ի՞նչ են երգում մեր ժամանակի աշուղները. վերցնենք
մի քանի նմուշներ նոցա մէջ ամենայայտնի ու տիպիքական ա-
շուղի՝ Զիւանու, Երգերից և կտեսնենք, որ այստեղ բոլորովին
նոր մտքեր, նոր զգացմունքներ են յեղյեղում.

Մեր նախնեաց հօտն առնել կուզեմ, իմ որդեակ,
Էջմիածին, Սուրբ Կարապետ իւխտ գնա.
Անին չը մոռանաս, թէեւ աւերակ,
Կը համարուի նախնեաց փառքերուն վկայ:

Քու հարազատ մայրն է սուրբ Էջմիածին,
Սիրէ այդ սուրբ վայրը, սիրէ կաթողին.
Պապերուս հիմնարկած տունն է թանգագին,
Հայոց համար գրանից մեծ տուն չկայ:

Լաւ է, այդ պատճառով Կարին էլ կերթաս,
Յետոյ Մուշը, սիրուն դաշտը կը տեսնաս,
Տարոնի լեռներուն կը ծանօթանաս՝
Սուրբ Կարապետ ուխտ գնալով, հայ տղայ:

Զիւան, մայր չի լինի քեզ օտար կինը,
Սիրէ քու իսկ մայրդ, սիրէ քու հինը.
Թողած հոգուդ մօտիկ էջմիածինը,
Ի՞նչ գործ ունիս Հռոմ կամ Ամերիկա:

«Հայերու սեփականութիւնը» վերնադրով մի ուրիշ երգի
մէջ նա ասում է.

Հայերս մէկ լեզու, մէկ կրօն ունինք,
Ուրիշ ոչինչ մեզի սեփական չը կայ.
Մենք հայկական հագուստ, հայ տարազ չունինք,
Կորչել է հին ձեւը, մէկ նշան չը կայ:

Պապերս մէկ բանով շատ անգին էին,
Նպատակով տաճարներ կը շինէին.
Հին մնացած վանքերը չը լինէին,
Օտարը կասէին «Հայաստան չըկայ»:

Մի հատ եկեղեցի ունինք, մերն է զուտ,
Պարզ է, չունի այնքան բաներ նորամուտ,
Երգեր գրաւիչ, մեղմ, հոգիօգուտ, —
Մեր շարականի պէս շարական չըկայ:

Տէր, պահէ Արամեան հոգեւոր Դահը,
Մի մարիլ հայերուս մէկ հատիկ ջահը,
Նրա հետ կապուած է մեր ազգի շահը.
Բացի սուրբ Աթոռը մեզ պաշտպան չըկայ:

Զիւանի, մէկ մէկու կեանք նուիրելով
Հայ ապրինք հայութեան դանձին տիրելով,
Ինչ որ ունինք պահենք իրար սիրելով, —
Դրանից մեզի լաւ ուրիշ բան չըկայ:

Հեռու երկրներից փչած օտար հովերի, վնասակար ազդեցութիւններից զգուշացնելով աշուղ Ջիւանին այսպէս է կազմում «Լիւր համադմունքը».

... Թէև շատ բանի մէջ խեղճ եմ, տկար եմ,
Բայց այս համոզմունքիս մէջը հաստատ եմ, —
Էջմիածնում ժամկոչութեան յօժար եմ,
Ուրիշ ազգի քարոզարան չեմ լինի:

Ջիւանս կը մնամ ժրջան արի,
Չարակամ եղբօրս ցանկալով բարի,
Սեանում կը մնամ քառասուն տարի,
Չիք Խաչատուր Պապախանեան չեմ լինի:

Երբ Կովկասի հայ զինուորներուն ճանապարհ էին դնում առաջին տարիներում, Ջիւանին խրատում էր ու երգում.

... Ձը մոռանանք որ մեզ ունինք Էջմիածին սուրբ հաւատ,
Աշխատենք և միշտ ունենանք դէպի նրան վառ փառիւղ.
Անձով օգնենք մարմնաւորին, հոգին չը թողունք անյագ.
Սուրբ կրօնին, եկեղեցուն կեանքերս տանք պատարագ,
Որ նա լինի մեզի պաշտպան մտքերուս լուս ու ճրագ,
Սրտերուս մէջ ամուր պահենք մեր հաւատը տաք ու ջեր:

Հայի Աստուած, տո՛ւր հայերուն ջերմ հաւատ,
Սիրեն իրենց եկեղեցին հարազատ...

Խիստ մխիթարական է այս երեոյթը, որ Ս. Էջմիածինը իւր ամբողջութեամբ, իւր բազմահոգմանի նշանակութեամբ ծանօթ է եղել ինչպէս մեր հին աշուղներին, այնպէս էլ նորերին. իսկ ինչ բանի արժէքն ու սրբութիւնը հասկանում է աշուղը, հասկանում է կնշանակէ և ժողովուրդը, որովհետև աշուղը նրա մտքի, նրա դադափարների և զգացումների թարգմանն է: Ո՛րչափ ցանկալի է, որ այդ դադափարներն ու զգացումները, ամէն տեսակ մոլի ու նենգամեա ներշնչումների հակառակ՝ շարունակեն կենդանի մնալ մեր ժողովրդի մէջ, և ամէն հայի սրտից բխած լինի աշուղի այս ազօթքը.

Տէր, պահէ Արամեան հոգեւոր Գահը,
 Մի մարիլ մեր ազգի մի հատիկ ջահը,
 Նրանից է կախուած մեր ազգի շահը,—
 Բացի սուրբ Աթոռը մեզ պաշտպան չը կայ:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՄՇԱԿՈՒԻ ԴԱՂԱՓԱՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ
 ԴԱՍՏԻԱՐԱ ԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՈՎ.*

Ա՛մէն մի հասարակական հաստատութիւն պէտք է իւր
 որոշ գործնական առաջնորդող գաղափարն ունենայ. իսկ
 իւրաքանչիւր անհատի համար այդպիսի գաղափար սրոշելը
 դժուար է. անօգուտ կլինի օր. պահանջել ծնօղներէց, իրրեւ
 սողազայ քաղաքացիները դաստիարակողներէց, այս կա՛ր այն
 բարոյական յատկութիւնը: Պէտք է սպասել ուրեմն, թէ կգայ
 ժամանակ, երբ տէրութիւնը ինքը հասարակական հաստա-
 տութիւններում կդաստիարակէ այնպիսի մարդկանց որդի-
 ներին, որոնք ընդունակ չեն լինի լաւ բան սովորեցնելու
 իրանց որդւոց:

Բարձր բարոյականութիւն պիտի պահանջել յամենայն
 ղէպս նոցանից, որոնց արհեստն է դաստիարակութիւնը. այ-
 լապէս աւելորդ կլինի բարոյական օրէնքների ծրագիր կազ-
 մել սաների համար. միեւնոյն է. նոքա մեռած տառ կմնան:
 Այսպիսով նախ մանկավարժների վրայ պիտի ուշադրութիւն
 դարձնել, և եթէ նոքա իրրեւ մարդիկ, ազատ չեն կրքերից

*) Տես «Արարատ» մայիս, էջ 441: